ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 53-ՐԴ ՏԱՐԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945 թթ.) Խորհրդային Միությունը՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և դաշնակից մյուս պետություններ հետ միասին համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակ տարավ հիտլերյան Գերմանիայի և նրա գլխավորած ֆաշիստական խմբավորման երկրների նկատմամբ, որի շնորհիվ ֆիզիկական բնաջնջումից ու ստրկացումից փրկվեցին Եվրոպայի և Ասիայի շատ երկրների ժողովուրդներ։

Այդ հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ նաև հայ ժողովրդի համար, քանի որ ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան պատերազմի հենց առաջին իսկ օրերից պլաններ էր մշակում հարմար պահին Խորհրդային Հայաստան ներխուժելու և այնտեղ նոր ցեղասպանություն կազմակերպելու համար։ Թուրքիայի ֆաշիստամետ կառավարությունը 1941 թ. օգոստոսի 15-ի դրությամբ Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել իր 48 հետևակային դիվիզիաներից 26-ը, որոնք տեղաբաշխված էին հիմնականում՝ Վան—Երևան, Կարս—Լենինական և Արդահան—Ախալցրխա—Ախալքալակ ուղղություններով։

Պանթուրքիստները գերմանացիների ղեկավարությամբ Խորհրդային Միության դեմ Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու միանգամայն կոնկրետ պլան էին մշակել։ Նրանք նպատակ ունեին մասնատել ԽՍՀՄ-ը և նրա մի շարք տարածքներ միացնել Թուրքիային։ 1941 թ. հուլիսին «Բոզկուրթ» («Գորշ գայլ») հանդեսի 11-րդ համարում զետեղված էր «Թուրքիզմը սպասում է» վերնագրով մի հոդված՝ ապագա «Մեծ Թուրքիայի» քարտեզով, որի կազմի մեջ նշված էին Անդրկովկասը և Միջին Ասիայի խորհրդային հանրապետությունները։ Բնորոշ է, որ և՛ հոդվածում, և՛ քարտեզում Հայաստանը չի հիշվում։ Պանթուրքիստները Թուրքիայի սահմանները Կովկասի վրայով հասցնում էին մինչև Ղրիմ, Վոլգա, Ուրալ, Միջին Ասիա և Յակուտիա։ 1941 թ. հոկտեմբերին, երբ արդեն ծավալվել էին մարտերը Մոսկվայի համար, Հիտլերը խորհրդա-գերմանական ռազմաճակատում գտնվող իր ռազմակայանում հանդիպում ունեցավ մի խումբ թուրք զինվորականների հետ, որոնց ղեկավարում էր թուրք գեներալ էոքիլեթը։ Հանդիպման ժամանակ Հիտլերն իր դաղափարակիցներին հավաստիացնում էր, որ «Ռուսաստանի օրերը հաշված են» և որ պետք է շուտ ղործի անցնել։ Սակայն խորամանկ թուրքերը չէին շտապում ԽՍՀՄ-ի վրա հարձակվել, այլ սպասում էին Մոսկվայի ճակատամարտի ավարտին։ Ինչպես հայտնի է, այդ ճակատամարտում գերմանացիները առաջին անգամ խայտառակ պարտություն կրեցին, որի հետևանքով ոչ միայն վերջնականապես տապալվեց «կայծակնային» պատերազմի հիտլերյան պլանը, այլև պսակազերծ եղավ ֆաշիստական Գերմանիայի զորքերի անհաղթելիության առասպելը։ Մոսկվայի մատույցներում 1941 թ. դեկտեմբերին Կարմիր բանակի տարած հաղթանակը միաժամանակ նպաստեց հակահիտլերյան դաշինքի ամրապնդմանը, ինչպես նաև լուրջ նախազդուշացում հանդիսացավ Ճապոնիայի և Թուրքիայի կառավարող շրջանների համար՝ ժամանակավորապես ձեռնպահ մնալու ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու մտքից։ Սակայն 1942 թ. ամռանը, երբ գերմանական զորքե-

ին հաջողվեց ռազմավարական հաջողությունների հասնել խորհրդա-գերմանական ճակատի հարավ-արևելյան և հարավային ուղղություններում, անարգել շարժվել դեպի Ստալինգրադ և Կովկաս, Թուրքական կառավարող շրջանները նոր թափով շարունակեցին նախապատրաստական աշխատանքները՝ Խորհրդային Հայաստան ներխուժելու նպատակով։ Նրանք այս անգամ հայացքները հառել էին Ստալինգրադին և անհամբեր սպասում էին ճակատամարտի ելքին։ 1942 թ. հոկտեմբերին արդեն փողոցային մարտեր էին տեղի ունենում բուն Ստալինգրադում։ Այդ նույն ժամանակ գերմանական մի զորախումբ մարտեր էր սկսել Կովկասում։ Հաջողության դեպքում հարավից գերմանացիներին պետք է միանային Թուրքական 26 սպառազեն դիվիզիաները, որոնք 1912 թ. նոյեմբերի կեսերին անցնելու էին սահմանը։ Սակայն երբ հայտնի դարձան Ստալինգրադում կռվող գերմանական զորքերի անհաջողությունները, Թուրքիան նորից սպասողական դիրք բռնեց։ Ինչպես հայտնի է, 1942 թ. նոյեմբերի 19-ին խորհրդային զորքերը հակահարձակման անցան Ստալինգրադի շրջանում, շրջապատման օղակի մեջ վերցրեցին գերմանական զորքերի 330-հազարանոց խմբավորումը և մինչև 1943 թ. փետրվարի 2-ը լիովին ջախջախեցին այն։ Դա ստիպեց Թուրքական կառավարությանը ԽՍՀՄ հարավային սահմաններից ետ քաշել հարձակման համար պատրաստ իր 26 դիվիզիաները։ Պատերազմի հաղթական ավարտի շրջանում, 1945 թ. փետրվարին, երբ արդեն վճռված էր ֆաշիստական Գերմանիայի բախտը, Թուրքիան խորհրդանշական պատերազմ հայտարարեց իր նախկին դաշնակցին։

Այսպիսով, շնորհիվ Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության տարած հաղթանակի, հայ ժողովուրդը փրկվեց Թուրքերի կողմից նախապատրաստվող մի նոր ցեղասպանությունից։ Ինչպես Մոսկվայի և Ստալինգրադյան ճակատամարտերում, այնպես էլ պատերազմում տարած վերջնական հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև հայ ժողովուրդը։ ԽՍՀՄ 2,5 միլիոն հայերից բանակ զորակոչվեց ավելի քան 500 հազար հայ, որից շուրջ 300 հազարը Խորհրդային Հայաստանից։ Շուրջ 100 հազար հայ պատերազմին մասնակցեց աշխարհի մնացած երկրներից։ Այսպիսով, Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է շուրջ 600 հազար հայ, որոնցից ավելի քան 200 հազարը զոհվել են մարտերում։

Հայ ռազմիկները աչքի են ընկել ոչ միայն պատերազմին մասնակցելու բարձր ակտիվությամբ ու թվաքանակով, այլև մարտերում ցուցաբերած խիզախությամբ, հրամանատարական բոլոր կազմերում ունեցած իրենց տեսակարար մեծ կշռով։ Հայրենական մեծ պատերազմի տարիներին միայն Կարմիր բանակի շարքերում ծառայել է 60 հայ գեներալ, իսկ հաղթանակից հետո պատերազմի մասնակից հայ սպաներից 64-ին ևս շնորհվել է գեներալի կոչում։ Հայ զորավարներից Ի. Ք. Բաղրամյանին շնորհվել է Խորհրդային Միության մարշալի, Ի. Ս. Իսակովին՝ Խորհրդային Միության նավատորմի ծովակալի, Հ. Խ. Բաբաջանյանին՝ Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Ս. Ա. Խուդյակովին (Ա. Ա. Խանփերյանց)՝ ավիացիայի մարշալի, Ս. Ք. Ադանովին՝ ինժեներական զորքերի մարշալի (1980 թ.) կոչում։ Պատերազմի տարիներին հայ գինվորականներից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 6-ը՝ կորպուսի, 22-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի հրամանատարներ։ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության պարգևատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով Հայրենական մեծ պատերազմի տարիներին շքանշաններով ու մարտական մեդալներով են պարգևատրվել. հայեր՝ 66802, վրացիներ՝ 49106, ադրբեջանցիներ՝ 36180 մարդ։ Մեր հաշվումներով ընդհանուր առմամբ Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 108 հայ, որից 4-ը՝ 1939—1940 թթ. խորհրդա-ֆինական, 100-ը՝ Հայրենական մեծ պատերազմի, 4-ը՝ հետպատերազմյան խաղաղ շրջանում կատարած սխրանքների համար։ Խոր-

Խորհրդային Միության մարշալ Ի. Ք. Բագրամյանը և լեգենդար օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Ն. Գ. Ստեփանյանն այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի։ Պատերազմի տարիներին 13 հայորդի արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման. ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-գնդապետ, ավիակոնստրուկտոր Ա. Ի. Միկոյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի։ Պատերազմի տարիներին կատարած սխրանքների համար 27 հայ ռազմիկներ պարգևատրվել են Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով։

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են հայկական 76-րդ (հետագայում՝ 51-րդ գվարդիական), 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ, Խորհրդային Հայաստանի տարածքում կազմավորված կամ հանրապետության մարդկային ու նյութական միջոցների հաշվին համալրված՝ 61-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ հրաձգային դիվիզիաները։ Հայկական փառապանծ 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան գեներալ-մայոր Ն. Դ. Սաֆարյանի հրամանատարությամբ Կարմիր բանակի միակ ազգային զորամիավորումն էր, որ 1945 թ. ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին հաղթականորեն մտավ Բեռլին։

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդն են ներդրել նաև հայ պարտիզանները։ Միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200 հայ պարտիզաններ։ Ուկրաինայում Կովպակի պարտիզանական միավորման կազմում մարտնչել է «Հաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանցի, գեներալ Նաումովի միավորման կազմում՝ 250 հոգուց բաղկացած Անաստաս Միկոյանի անվան ջոկատը՝ Արամայիս Հովսեփյանի, Ֆրանսիայում 1200 խորհրդային ռազմագերիներից կազմված հայկական պարտիզանական առաջին գունդը՝ Ալեքսանդր Ղազարյանի, Հունաստանում 1000 հայ ռազմագերիներից կազմված «Ազատություն» ջոկատը՝ Բարկեն Ներսիսյանի գլխավորությամբ և այլն։

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին նաև սփյուռքահայերը։ Պատերազմի տարիներին նրանց ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի Մայր Հայրենիքը և համախմբվեց ազգային ճակատի կազմակերպությունների մեջ՝ իր նյութական ու բարոյական օգնությունը ցուցաբերելով մարտնչող Հայրենիքին։ Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով բաստեղծվեցին «Սասունցի Դավիթ», իրանահայերի դրամարներով՝ «Գեներալ Բագրամյան» տանկային շարասյուները։ Հազարավոր սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ մարտնչել են նաև զենքը ձեռքներին՝ արիությամբ կատարելով իրենց քաղաքացիական պարտքը այն երկրների բանակների կազմում, որտեղ ապաստան էին գտել 1915 թ. Մեծ Եղեռնից հետո։ Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են շուրջ 20 հազար հայեր։ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի բանակներում կային ավելի քան 30 հազար հայեր, որոնք զորակոչվել էին Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից։ Ամերիկյան բանակի գեներալներ դարձան Ջորջ Մարաիկյանը և Հայկ Շեքերջյանը, սիրիական բանակի գեներալի կոչման արժանացավ Արամ Կարամանուկյանը։ Իր անմար սխրանքով Ֆրանսիայում հռչակվեց Միսաք Մանուշյանը, որը հետմահու արժանացավ Դիմադրության շարժման հերոսի կոչման, հանուն Ֆրանսիայի ազատության իրենց կյանքը զոհեցին Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները։ Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում։ Բազմաթիվ հայեր ակտիվ մասնակցություն ունեցան Բուլղարիայի, Հարավսլավիայի, Լեհաստանի, Իտալիայի, Հոլանդիայի դիմադրական-պարտիզանական պայքարին և իրենց արժանի ավանդը բերեցին ֆաշիստական ստրկական լծից այդ երկրների ազատագրմանը։

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում իր արժանի ավանդը ներդրեց նաև Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը, որի հերոսական ջանքերի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեց 30 նոր արդյունաբերական ձեռնարկություն, յուրացվեց 300 նոր արտադրատեսակների արտադրությունը։ Հանրապետությունը վերածվեց Կարմիր բանակի մարտական զինանոցի, որտեղից՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանարանով ամեն օր տասնյակ գնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, դենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն։

Հայրենական մեծ պատերազմը մեր դարի խոշոր իրադարձություններից մեկն էր։ Եթե չջախջախվեր հիտլերյան ֆաշիզմը, ապա շատ ժողովուրդներ կոչնչացվեին կամ կստրկացվեին։ Մեծ հաղթանակը, իսկապես, ունեցավ համաշխարհային պատմական նշանակություն։

53-я ГОДОВЩИНА ВЕЛИКОЙ ПОБЕДЫ

Доктор ист. наук К. А. АРУТЮНЯН

Резюме

В годы Великой Отечественной войны Советский Союз вместе со своими союзниками одержал победу над фашистской Германией и ее сателлитами. Эта победа имела всемирно-историческое значение, так как от фашистского порабощения и физического истребления спасла народы мира. Эта победа имела важное значение и для армянского народа, так как гитлеровские фашисты и их союзники пантюркисты угрожали существованию армянского народа.

Свою достойную лепту в историческую победу над фашизмом внес и армянский народ; около 600 тысяч армян участвовало в войне, более 200 тысяч из них погибли на фронте. 104 армянина стали Героями Советского Союза.

В блестящей плеяде советских полководцев, вместе с И. Х. Баграмяном, достойное место заняли Адмирал флота Советского Союза, Герой Советского Союза И. С. Исаков, маршал авиации С. А. Худяков (А. А. Ханферянц), Главный маршал бронетанковых войск, Герой Советского Союза А. Х. Бабаджанян. В годы войны были организованы 6 армянских национальных дивизий. В историческую победу внесли свой вклад также армяне-партизаны, труженики тыла и зарубежные армяне.